2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ, ԹԵԺ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՀԱՋԱՆԳԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի ընթացքում Տեսչական մարմնին հանրության և տնտեսավարող սուբյեկտների կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 684 բողոք, որից 432-ը վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 114-ը՝ տրանսպորտային անվտանգության, 78-ը՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 56-ը՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 4-ը՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին։

2022 թվականի ընթացքում ստացված 684 բողոքներից հիմնավոր են 302-ը, որոնցից 2022 թվականին լուծում է ստացել 262-ը հիմնավոր բողոքների։ Ստացված բողոքների 299 հատ հիմնավոր չեն, 15 բողոքներով բարձրացված խնդիրների լուծումը դուրս է Տեսչական մարմնի լիազորությունների շրջանակներից։ Ընթացքի մեջ է 108 բողոք, որից 66-ը վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 3-ը՝ տրանսպորտային անվտանգության, 23-ը՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 15-ը՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 1-ը՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին։

2022 թվականի ընթացքում հանրությունից թեժ գծով ստացվել է 274 բողոք, ընդ որում 144-ը վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 79-ը՝ տրանսպորտային անվտանգության, 35-ը՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 15-ը՝ էներգետիկայի և էներգասպառմանը, **1**-ը՝ հողի պահմանման և հողօգտագործման ոլորտներին։